

ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՄՔԸ

(Ակսել Բակունցի 90-ամյակին)

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

Հովհաննես Թումանյանն իր ելույթներից մեկում հայ գրականությունը բնորոշելով ասել է, որ այն «ամբողջովին սեր է», և ավելացրել՝ «իսկ մեր անդուգական Սայաթ-Նովայի խոսքով ասած՝ «Սերը սեր կու բերեն»։ Այսպես Թումանյանը հայ բազմադարյան գրականության ամենակարևոր հատ-



կանիշը համարում էր նրա մարդասիրական ոգին, համընդհանուր սիրո շունչը։ Բակունցի ստեղծագործությունների լիարժեք արժանահատկությունը հենց այդ ոգին է, որը, սակայն, շատ յուրովի է արտահայտվել, զուտ բակունցյան մտահղացումներով ու գույներով։

1918 թվականի ծանր օրերին հրապարակված նրա ստեղծագործությունների մեջ տրամադրված կա պատերազմի դաժանության, հազարավոր զոհերի առթիվ։ Տասնինամյա Բակունցի այդ երկերը առաջին հրապարակային արտահայտություններն էին գրողի ստեղծագործական խառնրվածքի և ցույց էին տալիս, թե ինչ ուղղությամբ ու բովանդակությամբ պետք է զարգանար նրա տաղանդը։ Ընդհանրապես, համընդհանուր սիրո ոգու մի դրսևորումը խաղաղեցումն է կամ խաղաղության քարոզը։ Դրա հակառակը՝ թշնամանքի ու ատելության արտահայտությունը, պատերազմն է։ Բակունցի վաղ շրջանի պատմվածքները՝ «Աղոթք», «Աշտը» և «Անտառում», որոնք գրվել են պատերազմի օրերին, որոշակիորեն հակապատերազմական ուղղվածություն ունեն, լի էն խաղաղության երազանքով։ Հեղինակը, որ մասնակցել էր հայ-թուրքական ռազմաճակատի մի շարք ծանր մարտերի, տեսել շատ արյուն ու դիակ, ևարդկային տառապանք, երազում էր խաղաղություն ու եղբայրություն։ «Աղոթք» երկում նա գրում էր. «Հազարավոր կարոտյալների ու տանջվածների հոգուց եմ խոսում... Հեռացրու տանջանքն այս ահավոր, զրկանքնեղ բյուրավոր, էլ թող արցունքներ չհոսեն, թող հեռաց չլինի, թող հրդեհ չլինի։ Տե՛ր, թույլունե՛ր բնակորույս են, այգիները ամառի են և շեները ավերակ. մարդ չկա վարդի հոտով զմայլվող, Տե՛ր, ծուխ է ամենուր, տաճարների դմբեթները հողի հետ են հավասարվում, քո տները ավերվում են։ Մոխիրը շատ է. արյունով հագեցավ երկիրը։ Հեռացրո՛ւ, հեռացրո՛ւ հեռացրո՛ւ... Խաղաղություն տուր երկրին, թող ծաղիկները բույր տան, թող առաջվա պես առունները կարկաշեն և աստղազարդ երկնքի տակ մարդիկ գովքդ մրմնջան, աղոթեն քեզ»¹։

¹ Ա. Բակունց, Երկեր, հ. 2, Երևան, 1979, էջ 10։

«Աջոտոր» և «Անտառում» պատմվածքները պատերազմի տղամտական կամ ռեմարկյան մեկնարանություն ունեն. պատերազմը սպանդ է, որից ժողովուրդները, մանավանդ փոքր հայ ժողովուրդը երբեք օգուտ չի ունեցել— ահա Բակունցի գաղափարը, որը տոգորված է մեծ սիրով ռազմի դաշտում զոհված հայ գյուղացի աշտոնների նկատմամբ:

1924 թվականից սկսվեց Բակունցի ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանը: Գյուղատնտես-գրողը իր ստեղծագործությունների նյութն առնում էր գյուղական կյանքից: Հայ գյուղի մարդիկ, նրանց սովորությունները, գյուղական բնության գույները—սրանք են Բակունցի այս շրջանի ստեղծագործությունների ատաղձը: Իսկ բովանդակությունը նրբորեն զգացվող և անընդհատ մեծացող սերն է մարդու, բնության, առեն ինչի նկատմամբ:

Որպես հայ գյուղի գեղանկարիչ, Բակունցը եղավ ներկայացուցիչը հայ գրականության, այսպես կոչված, բնաշխարհիկ ուղղության, և նոր ուժ ու որակ տվեց այդ ուղղությանը: Հայ գյուղի մարդկանց բակունցյան կերպարներն, անշուշտ, ինչ-որ չափով իրենց մեջ կրում են հայ գրականության նախորդ շրջանի դեղչկական կերպարների հայտնի դասական հատկությունները, սակայն շատ ավելի մեծ չափով, նրանք յուրովի ակսելյան են, նորաբույր այդ գրականության մեջ:

Բակունցի գրական դիմագիծը, նաև գաղափարական ուղղվածությունը ամենից ավելի երևան է դալիս նրա կերպարների համակարգում: Այդ համակարգի մի գլխավոր խումբը գյուղի նահապետներն են: Նրանց մեջ նահապետականությունը համաձուլված է մարդկանց ծառայելու, «իրենից անհետ», ուրիշին տալու» էությունը: Դրանց մի լավագույն օրինակը Աթա լալերն է: «Եղբայրության ընկուզենիներ» պատմվածքում, պատերազմի, սովորյալ ժան օրերին Աթայի ողբը սրտաբուխ է հնչում, իսկ նրա անձնագույն օգնությունը համագյուղացիներին՝ հուզիչ է: «Կարմրաքար» վեպում համադրողացիների, մարդկանց հանդեպ փայլող սիրո մարմնացում է մի այլ գյուղական նահապետ՝ Ավան ամին: Եվ մենք կարող ենք արձանագրել, որ գրական այդ կերպարները ճշմարտացի, իրապաշտական, լինելով արտահայտում են Բակունց-հեղինակի մտածելակերպը, ավելի ճիշտ, մարմնավորում են գրողի մտահղացումը, որն այս դեպքում էլ հանգում է սիրո գաղափար-խոսությունը:

Բակունցի գյուղական նահապետները հակում ունեն նաև փիլիսոփայելու, և խորունկ է նրանց այդ փիլիսոփայությունը՝ հայ ժողովրդի մտածելակերպի դարավոր հեռուններից եկող: Լեռնային մոռացված գյուղերի ծերունի բնակիչների մեջ իմաստնության այդ հայտնաբերումը ևս բակունցյան մարդասիրության մի դրսևորումն է. դա հեղինակի երկրպագության հասնող խոր հարգանքի արտահայտությունն է հայոց լեռներում մոռացված մի ջրաղացպանի, մի այգեգործի կամ հողագործի նկատմամբ: Հեղինակը կարծես ուզում է ասել՝ միայն գիտական կաճառներում ու ճեմարաններում չէ, որ կարող է իսկական փիլիսոփայություն ստեղծվել, այլ նաև՝ գյուղական օթայում, և այդ շնչատված իմաստնությունը երբեմն ավելի խորունկ է լինում, քան այն, որ մարմնավորվում է մեծածավալ գրքերի մեջ:

Գեղջկական կերպարների մի շարք էլ լինվին Բակունցի գյուտն էր, որ նա բերեց հայ գրականության. խոսքը վերաբերում է բարձր գրականության համար աննկատ մնացող այն մարդկանց պատկերումներին, որոնք սովորականների մեջ էլ երրորդական են, որոնք հակադիր են անգամ գյուղական հարգված նահապետների կամ հերոսացող իգիթների կերպարներին, դրանք մարդիկ են, որոնք հայ գյուղացիների ընդհանուր զանգվածի մեջ դարեր շարունակ աննկատ են մնացել կամ եթե նկատվել են, ապա միայն իրենց ծայր խոնարհությամբ: Դրանք հայկական հին գյուղի, այսպես կոչված, գեղջկական «գորշ» զանգվածի մեջ արտաբուստ որևէ բարեմասնությամբ աչքի չեն ընկել կամ առանձնացել են իրենց անհրապույր արտաքինով: Արվեստագետ գրողը գյուղական «գորշ» զանգվածում նկատեց շատ հեղինակների համար աննկատ մնացող այդ մարդկանց, պեղեց նրանց ներսը և հոգեկան

կյանքի պայծառ աղամանդներ հայտնաբերեց թվացող գորշության մեջ: Ավելին, այդ գյուղացիներին դարձրեց իր լավագույն երկերի գլխավոր-դրական հերոսներ: Կյանքում կորածն ու աննկատը գտնվեց ու նկատելի դարձավ Բակունցի երկերում:

Ահա հովիվ Պետին՝ դեմքը ծաղկատար, մի աչքը հատ ընկած, անգրագետ, հնամաշ պատառոտված շորերով, իր լեռնային գյուղից դուրս չեկած: Ինչպես Բակունցն է բնորոշում, գյուղը մոռացել է Պետուն: Եվ ահա հեղինակը ընթերցողի առաջ բաց է անում այդ «կորած» մարդու ներսում գտնվող մեծ ու գեղեցիկ աշխարհ: Հովիվ Պետին մաքուր է հոգեպես, բյուրեղյա, ինչպես իրեն անվերջ շրջապատած բնությունը, ինչպես Այու սարը, ուր ամեն օր նա գյուղի տավարն էր արածեցնում: Պետին լի է մեծ սիրով, խղճմտանքով. նա երջանիկ է, երբ մի շարքա գյուղացու ուրախություն է պատճառում, երբ հայտնում է, որ մեկի կովը հորթ է ունեցել, ոչխարը՝ գառ: Բակունցն աշխարհից ու հայրենի գյուղից մոռացված այս խեղճ հովիվին արվեստագետի իր հատուկ աչքերով է տեսնում, ահա այսպես. «Թիկնել էր քարին, նայում էր դիմացի բլուրներին: Արևի շողի տակ ինչ-որ վեհություն կար Պետու շարքա, պղնձագույն դեմքին, փոս ընկած աչքերում անհուն բարեություն կար և միամիտ սեր...»²:

Նույն շարքի կերպարներից է մի այլ հովիվ՝ Վանդուց Բադին. արդարամիտ, խոնարհ ու նույնպես լի բարության: Աղնիվ աշխատանքը, քրտնեղով հաց վաստակելը Վանդուց Բադու կյանքի նշանաբանն է, և նա սարսափում է ամեն տեսակ ծուռ ու կեղծ ճանապարհից:

Մի անասելի ներքին հրապույր ունի ջրբաշխ Լառ-Մարգարե. ջրակալած աչքերով նիհարիկ այս մարդը, որ բարակ ոտքերը բաց օրն ի բուն առուների մեջ էր՝ բահն ուսին, արդարադատության խոր զգացում ու պայծառ սեր է սմբոթիլ իր ոսկրոտ կրծքի տակ: Տևր-Ջորի դաժան անապատում հարավատներին, համագյուղացիներին կորցնելուց հետո անգամ Մարգարի սերը ստողկանց նկատմամբ չի պակասել:

Վառ են նաև Բակունցի նույն շարքից գեղջկուհիների կերպարները, սարվորների վրանի մոտ կրակ անող, լուսկյաց գյուղացի կնոջ՝ Եղիշիկան մանուշակի մեջ Բակունց հեղինակին է, որ նկատում է դասական գեղեցկության գծեր, դախ ու աթար կրող մի խոնարհ գեղջկուհու նկատմամբ հայտնաբերում է կանացի նուրբ նվիրվածություն ու շոյող ջիւրմուխություն... Կերպարների այս շարքից են նաև «Մթնածորի» ձախողակ ու հլու Ավին, «Միհրավի» հուշերի մեջ սուզված զառամյալ Դիլան դային, նաև՝ բրուտ Ավագը, սառունցի Հագրոն, վաղամեռիկ Տիգրանուհին, Հաթամի դժբախտ աղջիկը, Մինա բիբին, մաճկալ Ունանը և այսպես շարունակ: Մա մի պատկերասրահ է, որտեղ րակունցյան բնորոշ գույների ընդհանրությամբ հանդերձ առկա է նաև բնավորությունների բազմազանություն: Եվ Բակունցի երկերում այդ կարող հովիվները, ջրբաշխները, մաճկալները, գյուղացի խոնարհ, «չխառնված» կանայք հանդես են գալիս ոչ թե իբրև անցողիկ, ուղեկցող կերպարներ, այլ որպես կենտրոնական դեմքեր: Այսինքն՝ յուրաքանչյուր պատկերասրահում ուշադրության կենտրոնում է ոչ թե մի առաջնորդ կամ ակնարկող անձ և կամ ընդգծող, հերոսական կերպար, այլ իրենց նկատելի շտվող, օրն ի բուն աշխատող հայ գեղջիկներ ու գեղջկուհիներ: Այս իրողությունն արդեն իսկ Բակունցի մարդասիրության յուրովի դրսևորում է:

Հայ գյուղի արդար մարդկանց իր վառ նկարագրություններով Բակունցը կարծես ի լուր աշխարհի ասաց, որ սա է իսկական հայ ժողովուրդը՝ քար ու հողից ծանր աշխատանքով բարիք ստեղծող:

Վերջապես, Բակունցը ասպարեզ հանեց, այսպես կոչված, բացասական կերպարների մի առանձին պատկերասրահ՝ խոջա Հիբան, Մկրտում, Պանին, Գողի... Ասում ենք, այսպես կոչված, քանի որ Բակունցյան էջերում չկան բացարձակորեն բացասական կերպարներ. մարդկայնորեն գեղեցիկը ինչ-որ

² Ա. Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, 1976, էջ 61:

տեղ ապրում է ամենաբացասական կոչվելու արժանի կերպարների մեջ: Պատկերման այս եղանակը իր հետևողականությամբ նույնպես նոր գիծ էր հայ արձակի «բացասական» կերպարների «համակարգում»: «Կարմրաքար» վեպում անգույն վաշխառու խոշա Հիբանը, որ հարստահարողի իր խորամանկություններով և նրբանկատ խարդախություններով կարող է զայրույթ առաջացնել ընթերցողի մեջ, ներկայանում է նաև իր խաբեությունների տակ, խորքում թաքնված դրական գծերով, նահապետական պարզ նիստ ու կացի նկատմամբ իր բնազդային հակումով: Ավելի «քաղաքակրթված» կեղծքիչ Մկրտումը կարծես ամբողջությամբ բացասականության մարմնացում է, բայց հանկարծ պարզվում է, որ նա գործվագույթ հայր է, բնության գեղեցկություններն ընկալող անհատ: Նույնիսկ ստոր մի լրտեսի՝ Գոգու մեջ Բակունցը մարդկային քնքուշ զգացմունքների պահեր է դիտել: Ամենաբացասականի մեջ անգամ դրական բան նշմարելը մեծ արվեստագետի առանձնահատկություն է, և դա ևս համընդհանուր սիրո, մարդասիրության մի դրսևորում է: Բակունցը կարծես ասում է՝ մի խոտանեք ամենավատ մարդուն անգամ, փնտրեցեք նրա մեջ դրականը և կհամոզվեք, որ նա լրիվ անհույս չէ, կարող է դեռ մաքրվել:

Նախքան Բակունցը ոչ մի հեղինակ հայ գեղեցիկական կերպարների նորրորդն քանդակված այսպիսի մեծ քանակ և միաժամանակ նույնպիսի մեծ բազմազանություն չէր բերել գրական ասպարեզ: Դրա հետ միասին Բակունցը բնավորությունների կերտման իր արվեստով, մարդկային վերահաման ուժգնությամբ հաղթահարեց գյուղականի պատենը: Այնպիսի խորությամբ և այնքան շոշափելի են բացահայտված նրա գեղջուկ հերոսների հոգեկան աշխարհները՝ ելևէջումներով, որ առաջին դիրքում կանգնում են մարդիկ ընդհանրապես, մարդու հոգեկան կյանքի առեղծվածը, մանավանդ մարդկանց սերը և սերը մարդկանց նկատմամբ, իսկ գյուղականը մնում է իբրև ազգային-յուրահատուկի դրսևորում, որպես միջավայր:

Ակսելյան գրչով ստեղծված հայ արձակի այնպիսի էջեր, ինչպես «Աղոթքը», «Այու սարի լանջին», «Միրհավը», «Նոնարհ աղջիկը», «Պրովինցիայի մայրամուտը», «Կյուրեսը», «Շղթայության ընկուզենիները», «Ալպիական մանուշակը», «Տիգրանուհին», «Սպիտակ ձին», «Նամակ ռուսաց թագավորին», ապա և՛ «Կարմրաքար», «Որդի որոտման» ու «Արույան» վեպերը և ուրիշներ կարող են պատիվ բերել աշխարհի ցանկացած գրականությանը: Եվ այդ բոլորի աղը, բովանդակության մեջ հիմնականը ու ձգողը համընդհանուր սերն է ընդհանրապես մարդու և առանձին մարդկանց նկատմամբ:

Բակունցի ներկայանալի գույները յուրահատուկ են, անմիջապես տարբերվող բոլոր մյուս հեղինակներից. նրանք պայծառ են, բայց միաժամանակ խոհուն, անբացատրելի ու նուրբ մի թախիժով պարուրված: Դա սիրո պայծառ տխրությունն է, որը նույնպես անընդհատ զգում ենք գրողի կերպարներից ու անզուգական բնանկարներից, հուզաթաթավ վերհուշներից ու քնարաշունչ շեղումներից, որոնք բոլորն ի վերջո բացահայտում են անչափ գեղեցիկ երազանքով լի մի մեծ հոգի՝ Ակսել Բակունց-արվեստագետին:

Հավանաբար, տխրության այդ երանգը, ինչպես և դրելակերպի որոշ այլ առանձնահատկություններն են պատճառը, որ Բակունցին անվանում են հայ արձակի Տերյան: Ժիշտ ընկալում է: Թեև թերի բնորոշում: Թերի՝ նախ այն պատճառով, որ Բակունցն իր նյութով, լեզվով, գրելակերպով զգալի չափով նաև Թումանյան է, ապա և այն, որ միահյուսելով արևելահայ գրականության ոճական երկու գլխավոր, երբեմն հակադիր, բայց միմյանց լրացնող ուղիները՝ թումանյանականն ու տերյանականը, Բակունցը միանգամայն նոր ու նորածին երևույթ էր, լուսապայծառ բոլորովին նորովի:

Սա վերաբերում է և՛ Բակունցյան դրելակերպին, և՛ բովանդակությանը, որոնք, անշուշտ անքակտելի միասնականություն են: Անված է, որ Թումանյանը և Տերյանը հակադիր լինելով իրենց լեզվաոճով, պատկերած միջավայրով, պատկերների համակարգով, միաժամանակ խորքում ընդհանուր են մարդասիրական ոգու տոգորվածությամբ: Բակունցի ընդհանրությունն այս

բանաստեղծների հետ նույնպես խորքային է. դա ես սիրո ոգու առկայությունն է:

Հայ նոր գրականության պատմությունը XIX դ. կեսերից սկսած շատ կողմերով գեղարվեստական-ազգային լավագույն ոճի տենդագին որոնման պատմություն է: Այդ ճանապարհին հոյակապ գյուտեր են արվել, որոնցից են թուամայանական ժողովրդային խոսքի կախարդական աշխարհը, Մեծարենցի բանաստեղծական ոճի լուսաճաճանությունը, իսկ ուղենշող դերով, դպրոց գոյացնելու տեսակետից արևելահայոց չափածոյում ամենանշանավորը Տերյանն էր, արձակում՝ Բակունցը: Ընդունված է ասել, որ 1908 թ. հետո հանդես եկած արևելահայ բանաստեղծները ծնվել են տերյանական մթնշաղից: Կարող ենք ասել, որ Բակունցի ասպարեզ գալուց հետո արևելահայ նորագույն արձակը ծնվեց ակսելյան Մթնածոցից, առավ նրա գույները: Հայտնի են տերյանական մթնշաղից ծնված բանաստեղծները, նույնքան հայտնի են նաև բակունցյան Մթնածոցից հասակ առած արձակագիրները: Վ. Տերյանը դանդաղում էր, որ հայ արձակն իր արվեստով շատ է հետ մնում հայ բանաստեղծությունից³: Վերջին երեք-չորս տասնամյակում ընդհանուր առմամբ հայ չափածոյի և արձակի որակային հավասարակշռություն է դիտվում: Ե՞րբ է վերացել չափածոյի գերազանցությունը: Բակունցի ասպարեզ գալուց հետո: Եվ սա տեսական դրույթ չէ, այլ պատմաժամանակագրական իրողություն: Արդ. բակունցյան գրեկներով, պատկերների գունաշարը, լեզվառճը ուղենիշ եղան հայ արձակի զարգացման համար, բայց և կարևոր է նաև Բակունցի ստեղծագործության բովանդակության գլխավոր հատկանիշը, մարդասիրական ոգու եթե ոչ պահպանումը, ապա նորաբնույթ հայտնությունը հայ գրականության, հատկապես արձակի մեջ: Դրա օրինակն էլ կարելի է գտնել վերջին շրջանի հայ գեղարվեստական արձակի որոշ նմուշներում:

Բակունցն, ինչպես հայտնի է, գրել ու ավարտել է երեք վեպ⁴, որոնցից միայն հատվածներ են պահպանվել: Վերջինը ստեղծվել է նրա «Աբովյան» վեպը, որի եզրափակիչ էջերը հեղինակը գրել է ձերբակալվելուց մի քանի ամիս առաջ:

Հիշենք «Վերքի» առաջաբանը. «Ոչ քսան-երեսուն տարուց ավելի ա, իմ ևդիդ հեր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա, գէշեր ցերեկ լացն ու սուբը իմ աչքիցս, ախն ու վախը իմ բերանիցս չի պակասում, այ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պաստ՝ լինի ու հետո հողը մտնեի»,— հաշատուր Աբովյանի՝ այսօր արդեն հանրահայտ այս խոսքերի ոգին ու ջերմությունն էին զգում ժամանակակիցները Ակսել Բակունցի հետ զրուցելիս: «Նրա ձայնը կարծես հնչում էր «Վերք Հայաստանի» առաջաբանից»,—գրել է իր հուշերում Վահրամ Ալազանը⁵:

Հաշատուր Աբովյանին Բակունցը ճանաչել է ոչ միայն նրա «Վերք Հայաստանի» և մյուս գեղարվեստական երկերի շնորհիվ, այլ Աբովյանի՝ այն օրերին դեռևս չտպագրված դորպատյան օրագրերից, նրա անձնական այլ գրություններից: Ներքին, խորքային Աբովյանը՝ ազգին անմեացորդ իր նվիրվածությամբ, շատ է հուզել, ոգևորել Բակունցին: Եվ ահա, երբ գրողը մի անգամ Աբովյանի մասին իր մտածումները հայտնում է Աղասի Խանջյանին, «ա Բակունցին խորհուրդ է տալիս իր այդ մտածումները մարմնավորել վեպի մեջ⁶: Այդ խորհուրդը գրողի սրտով էր, և նա անմիջապես գործի է անցնում:

³ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 338, 404 և այլն:

⁴ Այդ վեպերի ավարտված լինելու մասին տե՛ս Ա. Բակունց, Երկեր, հ. 3, Երևան, 1982, էջ 622—626, 650—659, նաև՝ Սովետական գրականություն, 1982, № 6, էջ 136—144, 1986, № 9, էջ 133—136:

⁵ Գրական թերթ, 19. VI. 1959:

⁶ Նույն տեղում:

Իր աշխատանքը Բակունցը սկսեց Արուսյանի կյանքի մանրամասն ուսումնասիրությամբ: Նա Երևանի դիվանատանը, Արուսյանի հարազատների մոտ լարված աշխատում էր. կարդում էր հարյուրավոր ձեռագրեր, բազում էջեր արտագրում, և որքան ավելի էր խորանում Արուսյանի կյանքի ուսումնասիրման գործում, այնքան ավելի մեծանում էր նրա հետաքրքրությունն ու ոգևորությունը:

Որպես իր ուսումնասիրությունների արդյունք՝ 1932 թ. Բակունցը հրապարակեց «Նաչատուր Արուսյանի» անհայտ բացակայումը» գիտական աշխատությունը, որի մեջ բոլորովին նոր լույսի տակ էր ներկայացնում Արուսյանի անձն ու գործունեությունը: Գրողի այդ ուսումնասիրությունը իր գիտական ճշգրտությամբ, փաստերի առատությամբ, առեղծվածների տրամաբանական լուծումներով, մտածումների ոգով լավագույնն էր Արուսյանի մասին մինչ այդ գրված բոլոր աշխատություններից, այն այսօր էլ լիովին պահպանել է իր այդ արժեքը:

30-ական թվականների հայ գրական կյանքում Բակունցը ստեղծեց, եթե կարելի է այսպես ասել, արուսյանական ոգի. Արուսյանի կերպարը շատ խոսակցությունների, վեճերի նյութ դարձավ, նրանով խանդավառվում էին հայ բանաստեղծները և ամենից առաջ, Իհարկե, Բակունցի մտերիմ բարեկամը՝ Ծղիշ Զարենցը: Այդ ոգևորության մի արդյունքն էլ եղավ Զարենցի «Դեպի լյառն Մասիս» զարմանալի վիպերգը, որը նա նվիրագրեց Բակունցին:

Ինքը՝ Բակունցը, Արուսյանի կյանքը գիտեր այնքան մանրամասն, ինչպես ոչ ոք նախքան այդ և գուցե նաև՝ հետո: Ավելին. Բակունցն իբրև մեծ արվեստագետ, հոգեբան, կարողացել էր թափանցել Արուսյանի մտածելակերպի խորքերը, թեև առ թեև ընկալել նրա ծրագրերը, հոգեկան դեղնումները, ոգևորությունը, կասկածները, հիասթափությունները, ողբերգությունը: Արուսյանի կերպարը կենդանի ապրում էր Ակսելի մեջ, մնում էր թղթին հանձնել այն: Բակունցը ջանում էր հնարավորին չափ պահպանել դեպքերի վավերականությունը և կերպարների իրական գծերը: 1934 թ. վեպի մի զգալի մասն արդեն գրված էր: Այդ թվականի մայիսի 20-ին «Գրական թերթում» առաջին անգամ տպագրվեց վեպից մի հատված՝ «Իրավան Զարսու բազար» վերնագրով: Դա հին Երևանի և նրա շուկայի նկարագրությունն է: Տպավորությունը ցնցող էր: Արևելյան շուկայի այդպիսի գունեղ նկարագրություն հայ գրականության մեջ առաջին անգամ էր կատարվել: Բակունցը պատկերել էր իրենից հարյուր տարի առաջ գոյություն ունեցած շուկան, բայց կարծես ականատեսի աչքով, և ընթերցողների առաջ մեկը մյուսին փոխարինում էին հին Երևանի շարժուն պատկերները՝ փոքր ու մեծ շուկաները, խանութները՝ լի արևելյան գունավոր թավիշներով ու կերպասներով, մետաքսե պատկերազարդ գորգերով, զառ լաշակներով... Կենդանի ապրում, գործում էին մարդիկ՝ դարբիններ ու ոսկերիչներ, պայտարներ ու պղնձագործներ, նաև վաճառականներ՝ խորասանի խալու վրա նստած՝ ոսկենկար ֆինջաններով թել խմելիս, սարաֆներ ու «մուշտարիներ»՝ քաղդեական ծալ-ծալ միրուքներով, շրջիկ թեյավաճառներ...

Հին Երևանի «Զարսու բազարի» մեծ վարպետությամբ նկարված գունագեղ կտավը ցույց տվեց, որ գրվում է ամենաբարձր կարգի պատմական վեպ: 1935 թ. առաջին երեք ամիսներին «Գրական թերթում» և «Խորհրդային գրականություն» ամսագրի էջերում լույս տեսան վեպից այլ հատվածներ, որոնք ապացուցում էին, որ առաջին հրապարակման թողած ուժեղ տուգանքությունը եզակի չէր և պատահականություն էլ չէր: Այս անգամ Բակունցի ընթերցողը մերթ հայտնվում էր հեռավոր Դուրպատում և շրջում նրա՝ եվրոպական ճարտարապետությամբ կառուցված ուղղաձիգ փողոցներով, մտնում հրապուրիչ բակերը, մայր համալսարանի սյունազարդ շենքը, մերթ էլ հայտնվում էր Կոնդի նեղլիկ բավիղում կամ Գյուրջի քարվանսարայի մոտ և կամ՝ Ակոռի հայկական գյուղում ու Արուսյանի հետ բարձրանում. Աբարատի գագաթը:

Առավել զարմանալին Դորպատի քաղաքային կյանքի, կենցաղի, ուսանողության նիստուկացի, տրամադրությունների, նրանց աշխույժ, «անկարգությունների» անկրկնելի նկարագրություններն էին: Ծվ դարձյալ, Բակունցը հրե էլ ինչու էստոնիայում, Դորպատը չէր տեսել, բայց այնպիսի մանրամասներ էր նկարագրել այդ երկրի ու քաղաքի կյանքից և գեղարվեստականորեն այնքան շոշափելի, որ այժմ էլ էստոնացի գրողները, պատասխանները հիանում են բակունցյան այդ էջերը կարդալով, զարմանք հայտնում այն բանի համար, թե ինչպես կարելի է էստոնիայում բոլորովին չլինել, Դորպատի մոտով անգամ չանցնել և այդքան ճշմարտացի պատկերել այդ երկրում մեկ դար առաջ ապրած մարդկանց, տեղի ունեցած անցքերը: Կարծում եմ՝ որևէ այլ հեղինակ Դորպատի անցյալ կյանքի այդպիսի վառ պատկերներ չի ստեղծել:

Մամուլում «Խաչատուր Աբովյան» վեպի հատվածների հրապարակումը շարունակվեց, քանի որ շուտով՝ 1936-ին պետք է լույս տեսներ վեպի ամբողջությամբ: Սակայն նույն թվականի օգոստոսի 9-ին Բակունցը ձերբակալվեց:

Վեպից պահպանվել է երկու հատված. մեկը Աբովյանի կյանքի դորպատյան տարիների պատկերումն է՝ «Լիրեր Արմենիեր» և «Դեպի լյառն Մասիս» վերնագրերով, մյուսը Աբովյանի երեսնյան կյանքից մի քանի դրվագ է ներկայացնում՝ «Դործ Մայրանի դստեր Մկրտումի» վերնագրով: Սրա մեջ է նաև «Իրավան Չարսու բազարը»:

Ինչպես որ հնադարյան արձանի պահպանված մի քանի բեկորի շնորհիվ պատկերացում ենք կազմում հրաշակերտ քանդակի ամբողջության մասին, վերականգնում այն, այնպես էլ Բակունցի վեպի պահպանված այս երկու հատվածների շնորհիվ այսօր կարողանում ենք որոշել, որ գրողի «Խաչատուր Աբովյան» վեպն ամբողջությամբ իր գեղարվեստական մակարդակով հայոց պատմա-գեղարվեստական վիպագրության մեջ եղել է լավագույնը, և այդ արժանիքը պահպանվում է նաև այսօր:

Վեպի ամբողջության մասին պատկերացում կազմելուն օգնում է նաև գրողի վերահիշյալ աշխատությունը՝ «Խաչատուր Աբովյանի» անհայտ բացակայումը, որը, կարելի է ասել, «Աբովյան» վեպի գիտական հիմնավորումն ու նախածրագիրն է եղել: Դրա շնորհիվ այսօր մենք որոշում ենք, որ կորած են վեպի այն հատվածները, որոնցում պատկերված են եղել Աբովյանի կյանքի թիֆլիսյան շրջանը՝ նրա Դորպատից վերադառնալուց հետո, ուսուցչական գործունեությունը Թիֆլիսում, ամուսնությունը, աշխատանքը «Վերք Հայաստանի» վեպի վրա, ընդհարումները ցարական պաշտոնյաների հետ: Այա, չկան Երևան փոխադրվելու և այս քաղաքում կյանքի առաջին շրջանը պատկերող մասերը, ինչպես և Աբովյանի ու տեղի իշխանությունների բախումների նկարագրությունները: Բացակայում են նաև այն հատվածները, որոնցում պատկերված են եղել Աբովյանի ընտանեկան անհարթությունները, անհամաձայնությունները հետամնաց շրջապատի հետ, ապրած հիասթափությունները, փախուստը. հիշենք, որ Բակունցի հետազոտությունները գրողին բերել էին այն եզրակացության, որ 1848 թ. ապրիլի 2-ին Աբովյանը փախել է ցարական Ռուսաստանից:

Նկատելի է իր գրական ոճին հատուկ գեղարվեստական վերհուշի հնարանքը: Նա իր հերոսի մանկությունն ու պատանեկությունը նկարագրել է վերհուշի միջոցով. Աբովյանը Դորպատում վերհիշում է իր ծննդավայրը՝ Քանաքեռը, հարազատներին, ապա և իր կյանքն էջմիածնում, վերելքը դեպի Արարատ: Ծվ ինչպես գրողի այլ երկերում, այստեղ ևս բակունցյան վերհուշը քնարական շունչ է հաղորդում երկին, սրտառու, անմոռանալի դարձնում նրա դրվագները:

Ուսումնասիրությունները պարզել են, որ Բակունցի այս վեպը, ինչպես և նրա մյուս գործերը, իրական դեպքերի, փաստերի վրա են կառուցված, և վեպի գրեթե բոլոր կերպարներն ունեն իրական նախակերպարներ, այդպիսիք են ուսուցչապետ Պարրոտը, նրա կինը, չերքեզը, Միրզամը, Մայրանը

և մյուսները⁷, Իրական դեպքերն ու դեմքերը արվեստագետի գրչի տակ վեր են ածվել գեղարվեստական անդուգական պատկերների ու գրական որոշակի կերպարների, Վեպի կենտրոնում Աբովյանի կերպարն է, նրա ապրած ներքին զարգացումը՝ էջմիածին-Դորպատ-Թիֆլիս-Նրևան ուղիներում: Վեպի ամեն պատկեր, ամեն դրվագ առնչված է գլխավոր հերոսի ներաշխարհի փոփոխման, հարստացման հետ:

Պատանի Աբովյանը՝ իր ժողովրդին նվիրված մի գեղջուկ՝ հայ սարկավագի հագուստով, միանգամից ընկնում է Դորպատի քաղաքակիրթ միջավայրը, Եվրոպացի պրոֆեսորների և ազատամիտ ուսանողության շրջապատ: Շատ բան է նա սովորում ու հասկանում, հղկվում է նրա շարժումները, բայց և ամեն ինչ նա չափում է իր հայրենիքին ծառայելու տեսանկյունից և բոլոր դեպքերում նպատակը հաջողությամբ է:

Բակունցը տպավորիչ է ներկայացնում իր հերոսի չափազանց ազնիվ ներքինը, նահապետականությունից պահպանված երբեմն մանկական միամտության հասնող հոգեկան մաքրությունը: Իսկ շերտեր գինվորի ու ռուս ձկնորսի հետ Աբովյանի ունեցած շփումների շնորհիվ էլ րացահայտվում է Բակունցի գլխավոր հերոսի խղճմտանքի մեծ պաշարը, մարդասիրական ոգին: Դորպատի ուսանողները, նրանց փոթորկալի կյանքը Աբովյանի մեջ զարգացնում են հանուն ազատության անձնվեր պայքարի տենչը:

Բակունցի Աբովյանը հայ գրականության ամենահմայիչ, ամենաճշմարտացի կերպարներից է, այն առավել հուզիչ է դառնում վեպի վերջում՝ նրա ընդունած ողբերգական որոշումով:

«Աբովյան» վեպը նաև հայոց լեզվի առաջնակարգ կոթող է: Բակունցը, իր լեզվական արվեստը բարձրակետին հասցրեց այս վեպում: Հիանում ենք հայոց նոր լեզվի՝ աշխարհաբարի այն անպատմելի գեղեցկությամբ, մարդկային ապրումներ, բնության ու կյանքի դրվագներ պատկերելու գեղարվեստական այն մեծ արտահայտչականությամբ, որոնց հետ հաղորդակցվում ենք «Աբովյան» վեպի պահպանված հատվածներն ընթերցելիս:

Բակունցի այս վեպի ընթերցումն է, որ առավել շոշափելի է դարձնում հայոց լեզվի ուժը, համոզում մեզ, որ աշխարհի հնագույն լեզուներից մեկը նորոգված էլ լավագույնն է:

Նվ այս վեպն է, որ գրողի «Որդի որոտման» վեպի ավարտուն ձևագրի հետ ոչնչացվեց 1937-ին: «Կարմրաքար» վեպի ավարտուն ձևագիրը փախցվեց Թիֆլիս⁸, բայց նրա հետքերն էլ չկան, և, հավանաբար, այն էլ ոչնչացվել է: Ունեցե՞լ է արդյոք հայ նոր գրականությունն ուրիշ այսպիսի մեծ կորուստ: Ոչ, որքան մեզ հայտնի է:

«Որդի որոտման» երգիծական վեպից պահպանված հատվածները պարզ ցույց են տալիս գրողի մտահղացումը և երկի բովանդակությունը: Դա երգիծանք էր՝ ուղղված հայ գյուղը քայքայող «ղեկավար ընկերների» դեմ: Վեպում քաղաքից գյուղ գործուղված ընկերը՝ կոլխոզ շինարար Պեդեյանը, քայքայում է լեռնային Բովեր գյուղը, ջնջում նրա անունը քարտեզից:

«Կարմրաքարը», կարծում ենք, անցյալի հայ գյուղը պատկերող բոլոր վեպերի մեջ անդուգական է: Գյուղի կենցաղի մանրամասները, հայ գյուղացիների դարերի խորքից եկած սովորությունները, տարբեր բնավորությունները, գյուղի գույտ ազգային բնույթը պատկերված են գեղարվեստորեն, իրոք, անգերազանց վարպետությամբ:

Հիմա, երբ ավելի քան հիսուն տարի է անցել Բակունցի գեղակահարության օրից (1937 թ. հուլիսի 18), մտածում է առաջանում, թե ի՞նչն էր պատճառը, որ սկսած 1925 թվականից, մինչև գրողի ձերբակալությունն ու զոհվելը, և դրանից հետո էլ նրա դեմ այնքան մեծ ու անգույթ հալածանք ծավալվեց: Ոչ մի հայ գրող այդպիսի չափերի և ուժգնության հալածանքի

⁷ Տե՛ս Լ. Ա. Բակունց, Երկեր, հ. 3, էջ 659—673 (Մանթապրություններ):

⁸ Տե՛ս Սովետական գրականություն, 1986, № 9, էջ 133—136:

լի ենթարկվելու Անշուշտ, նախանձը մեծ դեր է կատարել, բայց ամենը միայն դրանով բացատրել անհնար է:

Այսօր մեծ արվեստագետի ծննդյան 90-ամյակի առթիվ, հավանաբար, թեկուզ համառոտ պետք է հիշվեն նաև այն հեղինակները, որոնք գործուն մասնակցություն են ցուցաբերել Բակունցի դեմ հրահրված արշավում: Դա գրողի հիշատակն է պահանջում, արդարության կանչը:

Հակաբակունցյան առաջին հոգվածը՝ լի քաղաքական մեղադրանքներով, տպագրվեց 1925 թ. հունվարի 10-ին Գորիսի «Կարմիր ռաշպար» թերթում (հեղինակը Գ. Ղազարյան), երբ Բակունցը Զոնգեզուրի գլխավոր գյուղատնտեսն էր: Հոգվածը չարագուշակ էր, և գրողը փոխադրվեց Երևան, չմտածելով, որ այստեղ ավելի դաժան հարձակումներ են լինելու: Եվ ահա «Գրական դիրքերում» ամսագիրը սկսեց մասնագիտանալ Բակունցին ամեն կերպ վարկաբեկելու բնագավառում: «Գյուխգործոցը» Հ. Մկրտչյանի (Քսպե) «Ակսել Բակունցի ստեղծագործությունների սոցիալական արժեքը» հոդվածն էր: Ահա մի քանի քաղվածք նրանից. «Զկանգնելով դասակարգային կռիվի տեսակետի վրա, ըմբռնելով դասակարգերի հարաբերությունները, Ակսելը չի ըմբռնում նաև շահագործման ու բռնության պատճառը, բնույթն ու ձևերը», «Նա չի ըմբռնում դասակարգային կռիվի դիալեկտիկան», «Նա չի մերկացնում պատերազմի՝ աշխարհի բաժանման ու ժողովուրդների ստրկացման համար մղվող իմպերիալիստական ավազակների կռիվը», «Ազգամիջյան կռիվների և դաշնակցական մատուցելիստների այդ օրերին հանդես է գալիս Ակսելի բուլշեիկ հերոսը, «գնդի կոմիտե»: Սակայն Ակսելը այնքան դժգույն ու ողորմելի կերպով է բնութագրում այդ հերոսին՝ Հաբուդին, որ նրա բուլշեիզմը մի միսալ անգամ չի երևում: Միանգամայն հասկանալի է, որ բուլշեիկը «սաղաթ» չէ, այլ Ակսելին հատուկ «մանր բուրժուական մի տիպ», «Դուրս է գալիս՝ ինչ-որ թմբկահարում են մեր քաղաքական հակառակորդները, պնդելով, որ «գրսից եկած» ուժը «բռնի» գրավել է Հայաստանը», «Մի՞րն աղբատ է, իսկ Մրոցը հարուստ: Ոչ կուլակ կա, ոչ հակահեղափոխական, ոչ քյոխվա, ոչ տերտեր, որոնք դիմադրեին խորհրդային կարգերին... Ահա հեղափոխության նկարագիրը Ակսելի երկերում», «Խորհրդային իշխանության սոցիալական հենարանը՝ գյուղի խորհուրդը, կոմսոմոլը Ակսելի ստեղծագործությունների մեջ երևան են գալիս շարժով: Ակսելը չի տեսնում այն նորը, որ բարձրանում է գյուղում պրոլետարիատի դիկտատուրայի և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Հենց դրա համար էլ Ակսելի երկերում խորհրդային ուժերը հանդես են գալիս ծաղրանկարներով», «Ավելի քան խայտառակ նկարագիր լինել չի կարող գյուղում սոցիալիզմ կառուցող, կրոնի, հնի, նահապետականության դեմ պայքարող մեր երիտասարդ գվարդիայի համար: Հակադրեք Բակունցի կոմսոմոլն այսօրվա մեր կոմսոմոլին, մեր պրոլետարական գրողներին՝ Արաքսի, Արմենի, Զարյանի, Ալադանի կոմսոմոլիստներին, մեր օրերի խորհրդի նախագահներին՝ Ալեքսանին, որը պայքար է մղում գյուղական կուլակների դեմ, միանգամայն ճիշտ ըմբռնելով «ո՛վ՝ ո՛ւմ» լոզունգի լենինյան իմաստը, և կերևա այն հսկայական վիճը, որ գոյություն ունի Ակսելի և մեր պրոլետարական գրականության միջև», «Ի՞նչ հիմնական թեզերից Ակսելը միանգամայն հետևողական եզրակացություն է հանում գյուղի ապագայի մասին և պարզապես բացասում է սոցիալիստական տնտեսության հաղթանակի հեռանկարները մեր գյուղում»⁹ և այլն: Հիշենք, որ սրանք այն օրերին մահացու մեղքեր էին դիտվում:

1934—35 թթ. Ա. Վշտունու խմբագրած «Խորհրդային արվեստ» ստանձնեց հակաբակունցյան արշավը շարունակողի դերը: 1934 թ. այդ հանդեսում Բակունցը խստագույնս մեղադրվեց Վարդան Այգեկցու առակաները աշխարհաբարի վերածելու համար, գրվեց՝ «Մեր ընթերցողները հարկ եղած կերպով քննադատորեն արժեքավորելով Այգեկցու առակաները... «կլանում են» ոչ

⁹ Գրական դիրքերում, 1928, № 11—12, էջ 118—122:

Թե ղերոհիշյալ առակների մորալը, այլ շտեմնված ոգևորությամբ դիմավորում են բոլշևիկյան արվեստի լավագույն նմուշներից մեկը՝ «Զապալը»¹⁰:

«Խորհրդային արվեստում» հակաբակունցյան գրություններ կրկին հանդես եկավ Հ. Մկրտչյանը: Նա մասնավորապես դրում էր. «Այդօրինակ տրամադրություններ արտահայտվեցին նաև Վ. Թոթովենցի «Կյանքը հին հոգեմեկան ճանապարհի վրա» գրքում: Դա նրա մանկության նկարագրությունն էր, որի մեջ բացակայում էր խորհրդային ինտելիգենտի ակնոցը, մասնավորապես մասերում, ուր տրված էր հայ-թուրքական ընդհարումը, քողարկված էր հայկական նացիոնալիզմի դեմքը: Նացիոնալիզմի արտահայտություն էր նաև Ա. Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքը, որի մեջ հեղինակը փոխանակ դրսևորելու մեր կերպարանափոխվող գյուղացիության դեմքը, նրա հերոսը հետ էր նայում կարոտով ու ափսոսանքով, հիշում էր հին գյուղը: Ա. Բակունցի հերոսի հովվական երգի մեջ լսվում է «կարոտի հնչյուններ» վերադարձի և վերջին հույսի»: Դա ափսոսանք էր դեպի հայ հին կյանքի հետամնացությունը: Մեր կուսակցության կենտկոմը...»¹¹ և այլն:

Իհարկե, հակաբակունցյան արշավի գլխավոր դեմքը Ն. Զարյանն էր, որ այդ բնագավառում հատկապես մեծ եռանդ ցուցաբերեց Բակունցի ձերբակալությունից անմիջապես հետո: Մեղ հայտնի են նրա հակաբակունցյան 5 հրապարակումները¹²: «Ճաշակ» տալու համար բերենք մի քանի քաղվածք: Նախ՝ «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» հոդվածից. «Ա. Բակունցն իր գրական ողջ գործունեության ընթացքում օձային հետևողականությամբ թույն է արտադրել իր բոլոր գրվածքներում... Ա. Բակունցը զրպարտում է խորհրդային գյուղացուն: Սահմանների լայնացման հույսն իր սեփական հույսն է, որ նա բերել է իր հետ իր ավանտյուրիստական կուսակցությունից: Իսկ խորհրդային հայ գյուղացին իր սեփական փորձով վաղուց է համոզվել, որ իր խորհրդային հայրենիքի սահմաններում, առանց աչք տընկելու հարևանի հողերին, ազնիվ աշխատանք թափելով նա կհասնի և արդեն հասնում է ունևոր և կուլտուրական կյանքի... Նրա (Ա. Բակունցի—Ռ. Ի.) մեջ դեռ ապրում է դաշնակցականների, հայ ժողովրդի այդ ամենաոխսերիմ թշնամիների ցնդաբանությունը «ծովից-ծով Հայաստանի մասին»: Այստեղ նա ձայնակցում է ֆաշիզմի հետ ձուլված, ռասայական տեսության ծիծաղելի ասպետ Նոբելի, այդ կարիկատուրային կիսագրագետ «հայկական Նիցշեին»... «Որդի որոտման»,—այս ծաղրական մականունով է կնքել Ա. Բակունցը գյուղի սոցիալիստական վերակառուցմանը նվիրված կոմունիստին: Եվ Բակունցը թշնամական ատելությամբ ջախջախում է նրան... Մեր պետական ու կուսակցական ղեկավար մարմինները աշխատանքներն ուժեղացնելու նպատակով գյուղերին կցում էին լավագույն, փորձված ընկերներին, մեծ մասամբ կոմունիստներին: Այսինքն Բակունցի թշնամական ծաղրն ուղղված է կուսակցության լավագույն զավակների դեմ... Դաշնակցական իժն առանց հրաժարվելու իր թույնից և անգամ չփոխելով իր շապիկը սողացել է մեր կուսակցության սրբազան ծոցը: Դավաճանները բացել են դռները նրա առաջ և նրա օձային մերկությունը ծածկել են խորհրդային լուսավոր քաղաքացու պսպղուն շապիկով... Իժը տաքացել է այնտեղ և, հավատարիմ իր հին բնավորության, շարունակել է խայթել ու թռնալուրել: Կուսակցության լավագույն զավակները տարիներ շարունակ տեսել են նրա խայթոցները, շոշափել են նրա թույնը մեր գրականության մեջ, ցանկացել են պատռել նրա շապիկը, թունազրկել նրան: Բայց Ա. Խանջյանն իր լակեյների միջոցով և իր անմիջական միջամտությամբ փակել է մարդկանց բերանը և դաշնակցական օձի ուներին գցել է խորհրդային գրականության վարպետի շլացուցիչ ծիրանին... Պատուված է Ա. Բակունցի շապիկը և նա երևում է իր օձային

¹⁰ Խորհրդային արվեստ, 1935, № 1, տե՛ս նաև նույն հանդեսի 1934 թ. № 13-ը:

¹¹ Նույն տեղում, 1935, № 21—22, էջ 6:

¹² Խորհրդային դրականություն, 1936, № 3—4, Գրական սերունդ, 1936, № 4, 5—6, Գրական թերթ, 25. V. 1936, Литературная газета, I. IX. 1936.

քստմանի մերկություն...¹³ Մի քաղվածք էլ նույն հեղինակի «Կապը կրտորած խմբապետը» հոդվածից. «Ջարմանալի պատմություններից մեկն Ա. Բակունցն արդեն պատմել էր իր հ. Աբովյանի մասին գրած նացիոնալիստական գրքում: Եթե ժամանակին նրան չմերկացնեին, դեռ մենք շատ շովինիստական զարմանալի պատմություններ կլսեինք կապր կտրած խմբապետից...»¹⁴:

Մի քաղվածք էլ բերենք Հ. Սիրասից. «հանջյանի մոտ հրավիրված կուսակցական խորհրդակցության ժամանակ Բակունցն արտասանեց հակահեղափոխական-նացիոնալիստական մի ճառ: հանջյանը փոխանակ արժանի հարված տալու երկերեսանուն, ներողամտությամբ Բակունցին ասաց, որ այդ մտքերը չի կարելի դուրսը՝ անկուսակցական գրողների ժողովում ասել: Ինչ խոսք, որ լիտիացած Բակունցը, հանջյանից բազմիցս շոյված այդ դաշնակցական սրիկան, ավելի ևս խրախուսվեց այդ ներողամիտ դիտողությունից. նա հետևյալ օրը իր թունոտ դաշնակցական, տրոցկիստական ճառը կրկնեց գրողների բաց ժողովում»¹⁵:

Այնուհետև, Բակունցի դեմ նույն ոճի հոդվածներ հրապարակեցին Ս. Կիրակոսյանը («Գողթի «Տարաս Բուլբան» և Ա. Բակունցի նացիոնալիստական հակահեղափոխական կոնցեպցիան»)¹⁶: Վ. Թերզիբաշյանը («Հակահեղափոխական նացիոնալիստների գրական հնարքները»)¹⁷, Վ. Մարդարյանը («Դաշնակ հակահեղափոխականի «գրական դեմքը»)¹⁸, Հ. Մամիկոնյանը («Նացիոնալիստական-տրոցկիստական «գրականության» դրոշակակիրը»)¹⁹: Ա. Ասատրյանը («Գրականության դասագրքերը մաքրենք նացիոնալիզմի կեղտից»)²⁰, Գ. Աբովը²¹ և ուրիշներ: Դեռ չհաշված հակաբակունցյան բնույթի գանազան առաջնորդողներ ու խմբագրականներ: Անգամ գրողի նախկին բարեկամները գրիչ շարժեցին նրա դեմ: Որպես օրինակ հիշենք Բակունցի բարեկամ, կինոռեժիսոր Հ. Բեկնազարյանին, որը 1938 թ. «Ջանդեզուր» կինոնկարի առաջին ցուցադրման առիթով գրեց. «Հայկինոյում և նրանից դուրս թշնամիներն ամեն կերպ աշխատում էին մեզ շեղել ճիշտ ուղուց: Նախ և առաջ ֆիլմի սցենարիան գրելը հանձնարարվել էր նացիոնալիզմի մոլի գալլ, դաշնակցական ճիվաղ Բակունցին, որը սցենարիայի իր երեք վարիանտներում ձգնում էր գաղտագողի անցկացնել իր ֆաշիստական տերերի պատվիրած դրույթները: Այդ նողկալի գրչակը փորձում էր անցկացնել այնպիսի սցենարիա, որտեղ պետք է ամենահրեշավոր ձևով աղավաղվեր պատմությունը՝ հօգուտ դաշնակ պարագլուխների»²²:

Այսպիսին է եղել հայ ամենալուսավոր հանճարներից մեկի՝ Ակսել Բակունցի ձակապաշտությունը: Գուցե հոգեբանները հետո բացատրեն, թե մարդկային ահավոր նախանձից բացի էլ ինչն է մղել գրողի հայրենակիցներին, գրչակիցներին և այլոց անհավատալիության աստիճան քսու, քստմանի գործեր կատարելու նրա դեմ:

Մեր որոնումները ցույց տվեցին, որ Բակունցը որևէ մեկի դեմ ամբաստանություն կամ նման բան չի գրել առհասարակ ու նաև իր այն դաժան տառապանքի օրերին: Ընդհակառակը, տվյալներ կան, որ գրողի սիրտը մընում էր սիրով լի՝ մարդկանց, հայրենակիցների, հայրենիքի նկատմամբ:

13 Գրական թերթ, 25. V. 1936:

14 Գրական սերունդ, 1936, № 5—6:

15 Գրական թերթ, 22. IX. 1936:

16 Գրական սերունդ, 1936, № 5—6:

17 Գրական թերթ, 12. VI. 1936:

18 Խորհրդային արվեստ, 1936, № 18:

19 Գրական թերթ, 6. IV. 1937:

20 Նույն տեղում, 21. V. 1937:

21 Նույն տեղում, 20. III. 1937:

22 Խորհրդային Հայաստան, 20. VI. 1938:

Եվ ո՞վ գիտի, գուցե իր այն եղբրական ժամերին նա մտքում արտասանել է իր հոգեհարազատ Տերյանի տողերը.

Որքան գառնություն տվել ես դու ինձ, այնքան թող լինի քո օրը խնդուն,
 Որքան մաշել ես սիրտս սառնությամբ և քինով ահեղ,
 Այնքան քեզ վայելք, այնքան սիրո երգ, այնքան օրհնություն:
 Իհարկե, Բակունցի ստեղծագործությունը 1920—30-ական թվականնե-

րին դրականորեն գնահատողներ էլ կային՝ Հ. Սուրխաթյան, Խ. Սարգսյան, Ա. Տերտերյան, Ռ. Աթայան: Իսկ Բակունց երևույթը ամբողջ մեծությամբ ժամանակին հասկացավ Ե. Չարենցը: Նա առաջինն ընկալեց Մրնաձորում ծաղցող թախծի նրբությունը, երբ Ակսելը «դեռ այր էր մի անարատ», իսկ տառապանքի օրերին բանաստեղծորեն բնորոշեց բակունցյան ստեղծագործությունը իբրև հայոց քարաքանդակ «մատուռների անշնչելի գրեթե», իբրև «ամրամարյա բառեր», «սրբազնագույն մյուռոն»... Եվ Չարենցն էր, որ եղբայրական ձեռք էր մեկնում տառապանքի մեջ խեղդվող նաիրյան մեծ գրողին.

...Հազարամյա փողի համար քո այն,
 Որ դարերով տենչած խաղաղության
 Երգն է հնչում, և մեր ժողովուրդը քանի
 Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո,
 Հնչելու է երգեր եղբայրության:
 Այս ամենի համար, օ, խեղճ իմ բարեկամ,
 Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով
 Եվ քեզ պարզում եմ ձեռք եղբայրական:

КРУПНЕЙШИЙ МАСТЕР АРМЯНСКОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ ПРОЗЫ

(К 90-летию со дня рождения Акселя Бакунца)

Р. А. ИШХАНЯН

Р е з ю м е

По определению Ов. Туманяна, главное отличие армянской литературы—это ее гуманистический дух. Ярким примером сказанному является творчество Акселя Бакунца. Большой любовью к людям, природе проникнуты все произведения писателя. Гуманизм Бакунца главным образом воплотился в литературных персонажах писателя-художника. Часть их—это патриархальные крестьяне—старейшины армянского села, живущие заботами односельчан, являющиеся их духовной опорой. Другая группа литературных героев Бакунца—это простейшие труженики старой армянской деревни—пастухи, садоводы, хлеборобы, гончары, прачки. Они различны по характерам, но их всех объединяет духовное богатство. Отрицательные герои Бакунца характерны тем, что в каждом из них писатель все же подмечает что-нибудь положительное, светлое.

А. Бакунц—величайший представитель армянской художественной прозы, однако часть его произведений, в том числе три оконченных романа, будучи неопубликованными, были уничтожены в 1937 г. При жизни Бакунц подвергался жестоким гонениям.

A MAJOR MASTER OF THE ARMENIAN LITERARY PROSE

(to the 90th birthday anniversary of Aksel Bakoonts)

ISHKHANIAN R. A.

S u m m a r y

By H. Toomanian's definition, the main characteristic of the Armenian literature is the spirit of humanism. The creative work by Aksel Bakoonts represent the best example thereof. The inner substance of Aksel Bakoonts' creative work is a universal love for man and nature, mostly expressed through the characters of his creation. A group of such characters are village elders devoted to the villagers and caring for them, another group are very common peasants—tillers of the land, gardeners, shepherds, potters and washer-women. They all differ in character one from another but have some spiritual richness in common. An important peculiarity of Bakoonts' negative characters is that beside with some negative in each type the author observes and discloses some humaney positive and bright feature. Bakoonts was a great master of the Armenian prose, but he had been subjected to cruel persecutions.